



ՀՀ Լոռու մարզի Քարաբերդի քվարցային գաբրոդիորիտների հանքավայրում նախատեսվող աշխատանքների համառոտ նկարագիրը

Քարաբերդի հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 14կմ հյուսիս-արևելք, Քարաբերդ գյուղից 1.4կմ հյուսիս:

Այն զբաղեցնում է շուրջ 12հա մակերես: Հանքավայրը շագհագործվել է նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանից:

Հանքավայրի հաշվեկշռային պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 08.04.1983 թվականի N 9219 արձանագրությամբ, ընդհանուր A+B+C₁ կարգերով 6885 հազար մ³ քանակով, այդ թվում՝ A կարգով – 704հազար մ³, B կարգով – 1629հազար մ³, C₁ կարգով – 4552հազար մ³:

Ընկերությունը ցանկանում է ընդլայնել ընդերքի տեղամասը և ընդերքօգտագործման իրավունք ստանալ շահագործելու հանքավայրի մնացորդային պաշարները շուրջ 12հա տարածքում:

Նշված պաշարները եզրագծված են հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ ARMWGS համակարգի)

1. Y=8458884.0000 X=4524440.0000
2. Y=8458920.0000 X=4524705.0000
3. Y=8459090.0000 X=4524629.0000
4. Y=8459316.0000 X=4524523.0000
5. Y=8459210.0000 X=4524227.0000
6. Y=8458982.0000 X=4524344.0000

Հումքը նախատեսված է երեսապատման բլոկների արդյունահանման համար, իսկ ջարդքարը ավազի և խճի արտադրության համար:



Համայնքի համաձայնությունը ստանալուց հետո ընկերությունը կկազմի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և աշխատանքային նախագծի հետ միասին ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացնի Լիազոր մարմնին:

Նախատեսվելիք աշխատանքներն իրականացվելու են ՀՀ և միջազգային օրենքների պահանջների համապատասխան:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե: